



EUROPEAN COURT OF HUMAN RIGHTS  
COUR EUROPÉENNE DES DROITS DE L'HOMME

ԵՐՐՈՐԴ ԲԱԺԱՆՄՈՒՆՔ

ՇՈՒՆՈՎԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ

(Գանգաղի թիվ 40358/05)

ՎՃԻՌ

ԱՏՐԱՍԲՈՒՐԳ

31 հոկտեմբեր, 2012թ.

**ՎԵՐՋՆԱԿԱՆ Է**

**31/10/2012**

*Սույն վճիռը վերջնական է դարձել Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն: Այն կարող է ենթարկվել խմբագրական փոփոխությունների:*



## ՇՈՒՆՈՒՄԸ ԸՆԴՈՒՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

### **Շուրխովն ընդդեմ Հայաստանի և Մոլդովայի գործով,**

Մարդու իրավունքների եվրոպական դատարանի (Երրորդ Բաժանմունք) Պալատը, հետևյալ կազմով՝

Josep Casadevall, *Նախագահ,*

Alvina Gyulumyan,

Ján Šikuta,

Ineta Ziemele,

Luis López Guerra,

Nona Tsotsoria,

Kristina Pardalos, *դատավորներ,*

և Santiago Quesada, Բաժանմունքի քարտուղարի տեղակալ,

2012թ. հունիսի 26-ին կայացած դռնփակ նիստում,

կայացրեց հետևյալ վճիռը, որն ընդունվեց նույն օրը:

## ԸՆԹԱՅՈՒՆՈՒՄ

1. Վարույթը հարուցվել է 2005թ. հոկտեմբերի 16-ին «Մարդու իրավունքների և հիմնարար ազատությունների պաշտպանության մասին» կոնվենցիայի («Կոնվենցիա») 34-րդ հոդվածի համաձայն Մոլդովայի քաղաքացի պրն. Վալենտին Շուրխովի («դիմումատու») կողմից ընդդեմ Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության բերված գանգատի (թիվ 40358/05) հիման վրա:

2. Դիմումատուին ներկայացնում էր Քիշնևում գործունեություն ծավալող փաստաբանը՝ պրն. Ս. Կորչակը: Հայաստանի Հանրապետության կառավարությունը («Կառավարություն») ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Հայաստանի Հանրապետության կառավարության լիազոր ներկայացուցիչ պրն. Գ. Կոստանյանը: Մոլդովայի կառավարությունը ներկայացնում էր Մարդու իրավունքների եվրոպական դատարանում Մոլդովայի լիազոր ներկայացուցիչ պրն. Վ. Գուզունը:

3. Դիմումատուն պնդել է, *inter alia*, որ նրա օգտին կայացված՝ օրինական ուժի մեջ մտած 2003թ. մարտի 27-ի վճիռը Հայաստանի դատարանների կողմից չճանաչելով և այն չկատարելով խախտվել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և թիվ 1

## ՇՈՒՆՈՒՄ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

Արձանագրության 1-ին հոդվածի ներքո նախատեսված նրա իրավունքները:

4. 2008թ. դեկտեմբերի 11-ին գանգատն ուղարկվել է Հայաստանի Հանրապետության կառավարությանը և Մոլդովայի Հանրապետության կառավարությանը: Որոշվել է նաև իրականացնել գործի ընդունելիության և ըստ էության միաժամանակյա քննություն (29-րդ հոդվածի 1-ին կետ): Մոլդովայի Հանրապետության վերաբերյալ գործերով ընտրված դատավոր պրն. Միհայ Պոալեյունգիի հրաժարականից հետո (Դատարանի կանոնակարգի 6-րդ կանոն) Պալատի նախագահը ad hoc դատավոր է նշանակել պրն. Յան Սիկուտային (Կոնվենցիայի 26-րդ հոդվածի 4-րդ կետ և Դատարանի կանոնակարգի 29-րդ կանոնի 1-ին կետ):

## ՓԱՍՏԵՐԸ

### I. ԳՈՐԾԻ ՓԱՍՏԱԿԱՆ ՀԱՆԳԱՄԱՆՔՆԵՐԸ

5. Դիմումատուն ծնվել է 1945 թվականին և բնակվում է Քիշնևում:

#### **Ա. Գործի նախապատմությունը**

6. 1971թ. մայիսին դիմումատուն, ով այդ ժամանակ բնակվում էր Երևանում, պետական սեփականություն հանդիսացող Երևանի մսի կոմբինատում աշխատանքի ընթացքում վնասվածք է ստացել, մասավորապես՝ ողնաշարի կոտրվածք: Նա ճանաչվել է մշտական բուժման ենթակա առաջին կարգի հաշմանդամ և ստացել է հաշմանդամության ամսական թոշակ:

7. 1972թ. փետրվարի 25-ին Մսի կոմբինատի վարչակազմն ընդունել է իր պատասխանատվությունը վթարի համար և դիմումատուին ցմահ նշանակել ամսական վճարումներ՝ հաշմանդամության նպաստի և միջին աշխատավարձի տարբերության չափով:

**Բ. Դիմումատուի իրականացրած գործողությունների առաջին և երկրորդ փուլերը**

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

8. Չպարզված օրը դիմումատուն, ով այդ ժամանակ, ըստ երևույթին, տեղափոխվել էր Մոլդավիայի ԽՍՀ, ներպետական դատարաններում հայց է ներկայացրել Մսի կոմբինատի դեմ՝ պահանջելով վնասների փոխհատուցում:

9. 1973թ. նոյեմբերի 20-ին Քիշնևի Լենինսկիյ շրջանային դատարանը Մսի կոմբինատին պարտավորեցրել է վճարել բուժման ծախսերը՝ 1,375 ռուբլուն համապատասխան միանվագ գումար և ամսական վճարներ 62.50 ռուբլուն համապատասխան գումար՝ 1973թ. հոկտեմբերի 29-ից մինչև 1975թ. օգոստոսի 20-ը ընկած ժամանակահատվածի համար, այսինքն՝ մինչև այն օրը, երբ դիմումատուն պետք է անցներ հերթական բուժզննումը: 1974թ. հունվարի 16-ին Մոլդավիայի ԽՍՀ Գերագույն դատարանի քաղաքացիական պալատը փոփոխել է այս վճիռը՝ նվազեցնելով նախատեսված գումարները՝ համապատասխանաբար մինչև 882 ռուբլի և 40 ռուբլի:

10. Պարզվել է, որ չպարզված օրը դիմումատուի նկատմամբ սահմանվել է անժամկետ հաշմանդամություն՝ աշխատունակության 100% կորստով: Հետագայում պարզվել է, որ կոմբինատը 1975թ. օգոստոսից հետո կամավոր հիմունքներով շարունակել է կատարել ամսական վճարումները:

11. 1980-ական թվականների վերջերին՝ չպարզված օրը, դիմումատուն հայց է հարուցել Մսի կոմբինատի դեմ՝ պահանջելով լրացուցիչ բժշկական օգնության և հատուկ սննդակարգի համար հավելյալ վնասների փոխհատուցում:

12. 1988թ. հունվարի 15-ին Երևանի Օրջոնիկիձեի շրջանի ժողովրդական դատարանը բավարարել է դիմումատուի հայցապահանջները և պարտավորեցրել Մսի կոմբինատին վճարել 5,430 ռուբլի միանվագ գումար՝ 1971-1986թթ. ընթացքում ստացած լրացուցիչ բժշկական օգնության համար ծախսերի դիմաց, 400 ռուբլի միանվագ գումար՝ 1986թ. նոյեմբերից մինչև 1987թ. հունիսն ընկած ժամանակահատվածում կատարված ծախսերի դիմաց և 4,655 ռուբլի միանվագ գումար՝ 1971թ. հոկտեմբերից մինչև 1987թ. հունիսն ընկած ժամանակահատվածում հատուկ սննդակարգի համար կատարված ծախսերի դիմաց (այսուհետ՝ «1988թ. վճիռ»): Այնուհետև, շրջանային դատարանը պարտավորեցրել է Մսի կոմբինատին դիմումատուին վճարել վճռի կայացման պահից

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

սկսած ամսական 119.63 ուրվի՝ լրացուցիչ բժշկական օգնության և հատուկ սննդակարգի համար:

13. Վճռի դեմ բողոք չի ներկայացվել, ուստի այն մտել է օրինական ուժի մեջ:

14. Պարզվում է, որ Մսի կոմբինատը 1992թ. հունվարի 1-ից դադարեցրել է դիմումատուի ամսական վճարումների կատարումը:

15. 1995թ. հունիսի 14-ին Երևանի Մսի կոմբինատը, որն այդ ընթացքում վերանվանվել էր «Ուրարտու արտադրական միավորում», վերակազմակերպվել է «Ուրարտու արտադրական միավորում Երևանի մսի կոմբինատ» բաց բաժնետիրական ընկերության (այսուհետև՝ «Ուրարտու» ԲԲԸ) և հետագայում սեփականաշնորհվել: Ընկերության կանոնադրությանը համապատասխան՝ «Ուրարտու» ԲԲԸ-ն «Ուրարտու արտադրական միավորման» իրավահաջորդն էր:

16. «Ուրարտու» ԲԲԸ-ի գործադիր տնօրեն Ռ.Դ.-ն 1995թ. հուլիսի 26-ի նամակով տեղեկացրել է Մոլդովայի հաշմանդամների միությանը, որ Կոմբինատն ունի ֆինանսական խնդիրներ և ի վիճակի չէ կատարել վճարումները: Գործադիր տնօրենը խոստացել է վերսկսել վճարումները՝ անկախ այդ խնդիրներից:

17. 1997թ. հունվարի 14-ին Երևանի Էրեբունի շրջանի ժողովրդական դատարանը «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքի դրույթների հիման վրա «Ուրարտու» ԲԲԸ-ն սնանկ է ճանաչել: 1997թ. ապրիլի 28-ին ընկերությունը աճուրդի է դրվել և վաճառվել մասնավոր անձի: 1997թ. մայիսի 12-ին և հունիսի 2-ին համապատասխանաբար Էրեբունի շրջանի ժողովրդական դատարանը մասնավոր անձին «Ուրարտու» ԲԲԸ-ի նոր սեփականատեր է հայտարարել և պարտապան ընկերությանն ազատելով որևէ պարտք մարելուց՝ ավարտել է սնանկացման գործընթացը: «Ուրարտու» ԲԲԸ-ն իր հերթին նոր կանոնադրություն է ընդունել, որի համաձայն այն չէր համարվում որևէ այլ ընկերության իրավահաջորդ և պատասխանատվություն չէր կրում այլ ընկերության պարտքերի համար:

18. 2001թ. ապրիլի 13-ի նամակով Մոլդովայի արդարադատության նախարարությունը (ՄԱՆ) տեղեկացրել է Հայաստանի արդարադատության նախարարությանը (ՀԱՆ)

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

դիմումատուի՝ 1988թ. վճիռը չկատարելու վերաբերյալ բողոքի մասին: Անդրադառնալով «Ուրարտու» ԲԲԸ-ի ֆինանսական դժվարությունների փաստին՝ ՄԱՆ-ը ուշադրություն է հրավիրել 1994թ. սեպտեմբերի 9-ին Մոսկվայում ստորագրված «Աշխատանքային պարտականությունները կատարելու հետ կապված խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջությունը այլ կերպ վնասած աշխատողներին պատճառված վնասի փոխհատուցման իրավունքները փոխադարձաբար ճանաչելու մասին» համաձայնագրի 7-րդ հոդվածին (Соглашение о взаимном признании прав на возмещение вреда, причиненного работникам увечьем, профессиональным заболеванием либо иным повреждением здоровья, связанные с исполнением ими трудовых обязанностей – «Մոսկվայի համաձայնագիր») և խնդրել է տեղյակ պահել իրենց քննության արդյունքների մասին:

19. 2001թ. հունիսի 25-ի նամակով ՀԱՆ-ը տեղեկացրել է ՄԱՆ-ին, որ դիմումատուն ներկայացրել է պատշաճ կերպով լրացված բոլոր փաստաթղթերը, այդ փաստաթղթերը պատրաստ են ուղարկելու համապատասխան դատարան՝ քննության առարկա վճռի կատարման համար՝ ինչպես նախատեսված է Անկախ պետությունների համագործակցության (ԱՊՀ) համաձայնագրերով:

20. 2001թ. նոյեմբերի 19-ին դիմումատուն նամակ է ներկայացրել ՄԱՆ՝ բողոքելով, *inter alia*, որ 1988թ. վճիռը չի կատարվում և խնդրելով, որ պարտքերը վճարվեն, իսկ ամսական վճարումները վերսկսվեն:

21. 2001թ. դեկտեմբերի 7-ին գրությամբ ՄԱՆ-ը դիմումատուի նամակը փոխանցել է ՀԱՆ-ին:

22. Չպարզված օրը դիմումատուն դիմել է ՄԱՆ-ին՝ տեղեկացնելով, որ պատշաճ կերպով լրացված փաստաթղթերի մասին վերջինիս պահանջը, հավանաբար, թյուրիմացություն է, քանի որ իր բողոքները վերաբերել են Հայաստանի դատարանների կողմից կայացված վճռի՝ որպես օտարերկրյա դատական ակտի չկատարմանը:

23. ՄԱՆ-ը 2002թ. օգոստոսի 2-ին ՀԱՆ-ին ուղղել է նույնաբովանդակ գրություն՝ դրան կցելով 1988թ. վճռի պատճենը և հայտնելով, որ կատարման համար անհրաժեշտ բոլոր փաստաթղթերը գտնվում են Հայաստանի իշխանությունների տրամադրության տակ:

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

24. 2002թ. սեպտեմբերի 20-ին ՀԱՆ-ը տեղեկացրել է ՄԱՆ-ին, որ դիմել է Երևանի Էրեբունի և Նուբարաշեն առաջին ատյանի ընդհանուր իրավասության դատարան՝ 1998թ. վճիռը չկատարելու պատճառների մասին հարցմամբ:

25. 2002թ. նոյեմբերի 21-ին ՀԱՆ-ը տեղեկացրել է ՄԱՆ-ին, որ 1997թ. հունվարի 14-ին «Ուրարտու» ԲԲԸ-ն հայտարարվել է սնանկ, աճուրդով վաճառվել երրորդ կողմին, որը չի հանդիսանում որևէ ընկերության իրավահաջորդ և որևէ ընկերության պարտքերի համար պատասխանատու չէ:

26. Չպարզված օրը դիմումատուն դիմել է ՀՀ գլխավոր դատախազին և ՀԱՆ՝ նշելով, որ վերը նշված պատասխանը հակասում է Մոսկվայի համաձայնագրի 7-րդ հոդվածին, որը պետք է կիրառվեր իր գործով «Ուրարտու» ԲԲԸ-ի լուծարման դեպքում:

27. Չպարզված օրը դիմումատուն գրել է ՀԱՆ-ին՝ հայտարարելով, որ «Ուրարտու» ԲԲԸ-ն չէր կարող համարվել լուծարված և որ, ամեն դեպքում, պետք է կիրառվեր Մոսկվայի համաձայնագրի 7-րդ հոդվածը: Նույն ժամանակահատվածում նա գրել է ՄԱՆ-ին՝ բողոքելով, որ վերջինս Մոսկվայի համաձայնագրի 10-րդ և 11-րդ հոդվածների ներքո չի արձագանքում Հայաստանի իշխանությունների կողմից նույն համաձայնագրի 7-րդ հոդվածի պահանջները չկատարելու փաստին:

28. Պարզվում է, որ դիմումատուն շարունակել է 1988թ. վճիռի չկատարումը բողոքարկել տարբեր պետական մարմիններում: 2006թ. ապրիլի 3-ի նամակով Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը, ի պատասխան Ռուսաստանի խորհրդարանին ուղղված դիմումատուի բողոքի, տեղեկացրել է նրան, որ, համաձայն Կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 576 որոշման, որը 2004թ. օգոստոսի 26-ից այլևս ուժի մեջ չէ, ընկերության լուծարման դեպքում վնասը պետք է փոխհատուցվի սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին: Դիմումատուն նման փոխհատուցման համար կարող էր դիմել համապատասխան իրավասու մարմինին, ինչը նա չի արել: Այդ պատճառով դիմումատուի կողմից իր բողոքում բարձրացված հարցերը դուրս են պետական մարմինների իրավասության սահմաններից: Դիմումատուին խորհուրդ էր տրվել դիմել դատարան:



**Գ. Դիմումատուի իրականացրած գործողությունների երրորդ փուլը**

29. Չպարզված օրը դիմումատուն հայց է հարուցել մոլդովական դատարաններ ընդդեմ «Ուրարտու» ԲԲԸ-ի՝ պնդելով, որ վերջինս 1992 թվականի հունվարի 1-ին դադարեցրել է վճարումներ կատարելը, և ներկայացնելով նոր վնասներ՝ ա) դեղորայքի ծախսեր, բ) պրոտեզավորման և հինգ տարին մեկ անվասայլակ գնելու ծախսեր, գ) կոմունալ վճարներ, դ) առողջարանային և հանգստյան ծախսեր՝ ներառյալ երաշխավորման և իր և իրեն ուղեկցող անձի ճանապարհային ծախսեր, ե) անկողնային սպիտակեղենի ծախսեր, զ) տրանսպորտային միջոցի գնման, դրա հիմնական վերանորոգման և վառելանյութի հետ կապված ծախսեր, է) ֆիզիոթերապիայի, մերսման, սարքավորումների վարձակալության և բուժողի ու մերսողի վճարումներ և ը) բնակարանի ձեռքբերման և դրա պահպանման համար անհրաժեշտ ծախսեր: Ծախսերը ներկայացված (ա)-ից (է) կետերի տակ պահանջվում էին 1992թ. հունվարից մինչև 2001թ. դեկտեմբեր ընկած ժամանակահատվածի համար: Դիմումատուն հայտնել է, որ դիմել է «Ուրարտու» ԲԲԸ-ի ղեկավարությանը վերոհիշյալ պահանջներով, սակայն մերժում է ստացել:

30. 2003թ. մարտի 27-ին Քիշնևի Չոկանա շրջանի առաջին ատյանի դատարանը գտել է, որ «Ուրարտու» ԲԲԸ-ն Երևանի մսի կոմբինատի իրավահաջորդն է և բավարարել է (ա)-ից (է) կետերի դիմումատուի պահանջները՝ նրան շնորհելով ընդհանուր 17,884 ԱՄՆ դոլար՝ միաժամանակ մերժելով (ը) կետի պահանջը (այսուհետ՝ «2003թ. վճիռ»): Այս վճիռը ենթակա էր բողոքարկման դրա ստացման պահից 15 օրվա ընթացքում:

31. Չպարզված օրը դիմումատուն բողոք է բերել՝ պահանջելով իր պահանջները բավարարել ամբողջությամբ:

32. 2003թ. հուլիսի 21-ին պրն. Ռ.Դ.-ն նույնպես բողոք է ներկայացրել՝ հավանաբար որպես ընկերության գործադիր տնօրեն:

33. 2003թ. հոկտեմբերի 22-ին Քիշնևի Վերաքննիչ դատարանի քաղաքացիական գործերով կազմը որպես վերջնական դատական ատյան, անփոփոխ թողեց 2003թ. վճիռը:

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

34. Պարզվում է, որ դիմումատուն միևնույն ժամանակ խնդրել է ՄԱՆ-ին աջակցել իրեն Հայաստանի Հանրապետության տարածքում «Քաղաքացիական, ընտանեկան և քրեական գործերով իրավական օգնության և իրավական հարաբերությունների մասին» 1993թ. հունվարի 22-ի Մինսկի կոնվենցիային համապատասխան 2003թ. վճիռը ճանաչելու և կատարելու հարցում (Конвенция о правовой помощи и правовых отношениях по гражданским, семейным и уголовным делам – «Մինսկի կոնվենցիա»)։ Հետագայում պարզվում է, որ 2003թ. սեպտեմբերի 1-ին ՄԱՆ-ը դիմումատուի պահանջը բոլոր անհրաժեշտ փաստաթղթերի հետ փոխանցել է ՀԱՆ-ին։

35. 2004թ. հունվարի 20-ի գրությամբ ՀԱՆ-ը տեղեկացրել է դիմումատուին, որ 2003 թվականի վճիռը ճանաչելու և կատարելու վերաբերյալ դիմումը փոխանցվել է Հայաստանի իրավասու դատարան։

36. 2004թ. մարտի 4-ին Երևանի էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարել է դիմումատուի պահանջը՝ ճանաչելով 2003 թվականի վճիռը և պարտավորեցնելով կատարել այն։

37. Չպարզված օրը պրն. Ռ.Դ.-ն վերաքննիչ բողոք է ներկայացրել այս որոշման դեմ։

38. 2004թ. ապրիլի 23-ին Հայաստանի քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը որոշել է մերժել դիմումատուի պահանջը։ Այս կապակցությամբ Վերաքննիչ դատարանը նշել է, որ 1988թ. վճռով դիմումատուին հատկացվել են ամսական վճարումներ բժշկական օգնության և հատուկ սննդակարգի համար, և վկայակոչել է Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի (գ) կետը։

39. Չպարզված օրը դիմումատուն վճռաբեկ բողոք է ներկայացրել, որով պնդել է, որ 1988թ. և 2003թ. վճիռների քննության առարկան տարբեր էր և որ պատասխանողը 1992թ. հունվարի 1-ից դադարեցրել էր կատարել վճարումներ։

40. 2004թ. սեպտեմբերի 17-ին Վճռաբեկ դատարանը մերժել է դիմումատուի բողոքը՝ համարելով այն չպատճառաբանված, և հաստատել է Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի եզրակացությունները։ Այս որոշման օրինակը ստացվել է դիմումատուի կողմից չպարզված օրը՝ 2005 թվականի ապրիլի 19-ից հետո։

ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

41. 2007թ. նոյեմբերի 22-ին ՄԱՆ-ը գրություն է ուղարկել ՀԱՆ-ին՝ փորձելով պարզել Հայաստանի իշխանությունների պաշտոնական դիրքորոշումը՝ Մոսկվայի համաձայնագրի մեկնաբանման և դիմումատուի գործի նկատմամբ դրա կիրառելիության, ինչպես նաև Հայաստանի դատարանների կողմից 2003թ. վճռի կատարման հարցի օբյեկտիվ քննության վերաբերյալ: Պարզ չէ՝ ՀԱՆ-ի կողմից այս գրությանը որևէ պատասխան տրվել է, թե ոչ:

II. ՀԱՄԱՊԱՏԱՍԽԱՆ ՆԵՐՊԵՏԱԿԱՆ ՕՐԵՆՍԴՐՈՒԹՅՈՒՆԸ  
ԵՎ ՄԻՋԱԶԳԱՅԻՆ ԻՐԱՎՈՒՆՔԸ

**Ա. 1995թ. Հայաստանի Հանրապետության  
Սահմանադրությունը (2005թ. նոյեմբերի 27-ի  
փոփոխություններով՝ ուժի մեջ մտած 2005թ. դեկտեմբերի  
6-ին)**

42. Համաձայն 6-րդ հոդվածի՝ միջազգային պայմանագրերը Հայաստանի Հանրապետության իրավական համակարգի բաղկացուցիչ մասն են:

**Բ. Մոսկվայի համաձայնագիրը (Մոլդովայի Հանրապետության  
և Հայաստանի Հանրապետության համար ուժի մեջ է մտել  
համապատասխանաբար 1995թ. հոկտեմբերի 7-ից և 27-ից)**

43. Մոսկվայի համաձայնագրի համապատասխան դրույթները սահմանում են.

**Հոդված 1**

«Սույն Համաձայնագիրը տարածվում է Կողմերի ձեռնարկությունների, հաստատությունների և կազմակերպությունների վրա (այդ թվում՝ նախկին ԽՍՀՄ)՝ անկախ սեփականության ձևից (այսուհետ՝ ձեռնարկություններ):

Աշխատանքային պարտականություններ կատարելիս աշխատողին խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջության այլ վնասման հետևանքով հասցված վնասի հետևանքով աշխատողին հասցված վնասի փոխհատուցման

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

համար վճարները (այսուհետ՝ վնասի փոխհատուցում) կատարվում են ձեռնարկություններում նախկինում աշխատած աշխատողներին, իսկ նրանց մահվան դեպքում՝ վնասի փոխհատուցման իրավունք ունեցող, Կողմերից ցանկացածի քաղաքացի հանդիսացող և նրանց տարածքներում մշտապես բնակվող անձանց: ...»

### **Հոդված 2**

«Աշխատանքային պարտականություններ կատարելիս աշխատողին խեղման, մասնագիտական հիվանդության կամ առողջության այլ վնասման հետևանքով հասցված վնասի (այդ թվում աշխատանքային պարտականությունների հետ կապված արտադրությունում դժբախտ պատահարի արդյունքում աշխատունակությունը կորցնելու դեպքում մյուս Կողմի տարածք տուժողի փոխադրվելուց հետո), մահվան հետևանքով աշխատողին հասցված վնասի փոխհատուցումը կատարվում է այն Կողմի գործատուի կողմից, որի օրենսդրությունը, խեղման, առողջության այլ վնաս ստանալու, մահվան պահին, տարածվում է աշխատողի վրա:

Վնաս հասցնելու համար պատասխանատու գործատուն այն փոխհատուցում է իր ազգային օրենսդրությանը համապատասխան:»

### **Հոդված 7**

«Աշխատողին հասցված վնասի համար պատասխանատու ձեռնարկության վերացման և նրա իրավահաջորդի բացակայության դեպքում Կողմը, որի տարածքում վերացվել է ձեռնարկությունը, երաշխավորում է վնասի փոխհատուցում այդ աշխատողներին՝ ազգային օրենսդրությանը համապատասխան:»

### **Հոդված 8**

«Սույն Համաձայնագրով նախատեսված գործերով իրավասու է այն Կողմի դատարանը, որի տարածքում տեղի է ունեցել գործողությունը, որն էլ հիմք է ծառայել վնասի փոխհատուցման մասին պահանջի համար, կամ այն Կողմի

## ՇՈՒՆՈՒՄ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

դատարանը, որի տարածքում բնակվում են անձինք, որոնք տուժողի ընտրությամբ վնասի փոխհատուցման իրավունք ունեն։»

### **Հոդված 10**

«Սույն Համաձայնագրի մեկնաբանման կամ կիրառման վերաբերյալ վեճերը լուծվում են շահագրգիռ Կողմերի միջև բանակցությունների կամ հանրաճանաչ այլ միջոցներով, ներառյալ Կողմերից որևէ մեկի խնդրանքով ստեղծվող համաձայնեցնող հանձնաժողովները։»

### **Հոդված 11**

«Սույն Համաձայնագրով չկարգավորված, ինչպես նաև նրա կիրառման հետ կապված հարցերը քննարկվում են Կողմերի լիազոր մարմինների կողմից։»

### **Գ. Մինսկի կոնվենցիան (Հայաստանի Հանրապետության և Մոլդովայի Հանրապետության համար ուժի մեջ է համապատասխանաբար 1994թ. դեկտեմբերի 21-ից և 1996թ. մարտի 26-ից)**

44. Մինսկի կոնվենցիայի՝ «Որոշումների ճանաչումը և կատարումը» վերտառությամբ III բաժնի համապատասխան դրույթները սահմանում են.

### **Հոդված 51. Որոշումների ճանաչումը և կատարումը**

«Յուրաքանչյուր Պայմանավորվող կողմ, սույն Կոնվենցիայով նախատեսված պայմաններով, ճանաչում և կատարում է այլ Պայմանավորվող կողմերի տարածքներում ընդունված հետևյալ որոշումները՝ ա) քաղաքացիական և ընտանեկան գործերով արդարադատության մարմինների որոշումները...»

### **Հոդված 53. Որոշման հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունը**

## ՇՈՒՆՈՒՄ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

«1. Որոշման հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունը ներկայացվում է այն Պայմանավորվող կողմի իրավասու դատարան, որտեղ որոշումը ենթակա է կատարման: Միջնորդությունը կարող է ներկայացվել նաև այն դատարան, որը գործով որոշում է կայացրել առաջին ատյանում: Այդ դատարանը միջնորդությունն ուղարկում է տվյալ միջնորդության վերաբերյալ որոշում կայացնելու իրավասու դատարանին...»

### **Հոդված 54. Որոշումների ճանաչման և հարկադիր կատարման կարգը**

«1. 51-րդ հոդվածով նախատեսված որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննվում են այն Պայմանավորվող կողմի դատարաններում, որի տարածքում պետք է իրականացվի հարկադիր կատարումը:

2. Որոշումների ճանաչման և հարկադիր կատարման թույլտվության մասին միջնորդությունները քննող դատարանը սահմանափակվում է պարզելով, որ պահպանված են սույն Կոնվենցիայով նախատեսված պայմանները: Եթե այդ պայմանները պահպանված են, դատարանը որոշում է կայացնում հարկադիր կատարման մասին...»

### **Հոդված 55. Որոշումների ճանաչման և կատարման մերժումը**

«...որոշումների ճանաչումը և հարկադիր կատարման թույլտվությունը կարող են մերժվել, եթե՝ ... գ) այն Պայմանավորվող կողմի տարածքում, որտեղ պետք է ճանաչվի և կատարվի որոշումը, միևնույն կողմերի միջև, միևնույն առարկայի մասին և միևնույն հիմքերով գործով ավելի վաղ ընդունվել է օրինական ուժի մեջ մտած որոշում...»

### **Դ. «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքը (ուժի մեջ է եղել 1995թ. հունիսի 18-ից մինչև 1997թ. մարտի 1-ը)**

45.17-րդ հոդվածի ներքո դատարանը իրավասու էր պարտապանին սնանկ ճանաչել:

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

46. 30-րդ հոդվածի 1-ին մասը սահմանում էր, որ դատարանը պետք է որոշի սնանկ ճանաչված իրավաբանական անձ հանդիսացող պարտապանի վաճառքն իրականացնել աճուրդի միջոցով: Միևնույն հոդվածի 4-րդ մասի համաձայն՝ սնանկ հայտարարված իրավաբանական անձի պարտավորությունների համար գնորդը պատասխանատվություն չի կրում:

47. 34-րդ հոդվածը սահմանում էր, որ սնանկացման վերաբերյալ գործի դատական քննությունն ավարտելու պահից դատարանը պարտապանին ազատված է հայտարարում չվճարված բոլոր պարտքերի վճարումից, որի պահից արգելվում է պարտապանի նկատմամբ դատական կարգով կատարվող ցանկացած հետապնդում՝ այդ պարտքերի հատուցման նպատակով:

### **Ե. ՀՀ կառավարության 1992թ. նոյեմբերի 15-ի թիվ 576 որոշումը**

48. Որոշման 16-րդ հոդվածի համաձայն, որը ուժը կորցրած է ճանաչվել 2004թ. օգոստոսի 26-ին՝ կազմակերպության լուծարման կամ վերակառուցման հետևանքով նրա գործունեության դադարեցման դեպքում աշխատողին աշխատանքային պարտականությունների կատարման հետ կապված պատճառված վնասը փոխհատուցում է նրա իրավահաջորդը, իսկ վերջինիս բացակայության դեպքում՝ սոցիալական ապահովության մարմինը՝ պետական բյուջեի հաշվին:

### **ԻՐԱՎՈՒՆՔԸ**

Լ. ԿՈՆՎԵՆՑԻԱՅԻ 6-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ 1-ԻՆ ԿԵՏԻ ԵՎ ԹԻՎ 1 ԱՐՁԱՆԱԳՐՈՒԹՅԱՆ 1-ԻՆ ՀՈԴՎԱԾԻ ԵՆԹԱԴԻՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

1. Դիմումատուն բողոքում է, որ Հայաստանի և Մոլդովայի իշխանությունների կողմից չի կատարվել 1988թ. վճիռը, իսկ Հայաստանի իշխանությունների կողմից՝ նաև 2003թ. վճիռը, որոնք երկուսն էլ կայացվել են իր օգտին: Նա վկայակոչել է

## ՇՈՒՆՈՒՄ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածը, որոնք, համապատասխանաբար, սահմանում են.

### **Հոդված 6**

«Յուրաքանչյուր ոք, երբ որոշվում են նրա քաղաքացիական իրավունքներն ու պարտականությունները ... ունի ... դատարանի կողմից ... արդարացի ... դատաքննության իրավունք»:

### **Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված**

«Յուրաքանչյուր ֆիզիկական կամ իրավաբանական անձ ունի իր գույքից անարգել օգտվելու իրավունք: Ոչ ոքի չի կարելի զրկել նրան գույքից, բացառությամբ ի շահ հանրության և այն պայմաններով, որոնք նախատեսված են օրենքով ու միջազգային իրավունքի ընդհանուր սկզբունքներով:

Նախորդ դրույթները, այնուամենայնիվ, չեն խոչընդոտում պետության՝ այնպիսի օրենքներ կիրառելու իրավունքին, որոնք նա անհրաժեշտ է համարում ընդհանուր շահերին համապատասխան, սեփականության օգտագործման նկատմամբ վերահսկողություն իրականացնելու կամ հարկերի կամ մյուս գանձումների կամ տուգանքների վճարումն ապահովելու համար:»

## **Ա. ԸՆԴՈՒՆԵԼԻՈՒԹՅՈՒՆԸ**

*1. 1998թ. հունվարի 15-ի վճիռը չկատարելը*

### **(ա) Բողոքի շրջանակները**

2. 1988թ. վճռով դիմումատուին շնորհվել է երեք միանվագ վճարման ենթակա գումար, ինչպես նաև ամսական վճարումներ՝ լրացուցիչ բժշկական օգնության և հատուկ սննդակարգի համար: Այնուամենայնիվ, դիմումատուի կողմից իր բողոքում և հետագա փաստարկներում բարձրացված միակ խնդիրը պայմանավորված է 1992թ. հունվարի 1-ից՝ լրացուցիչ բժշկական օգնության և հատուկ սննդակարգի համար կատարվող ամսական վճարումների չկատարման հետ: Հետևաբար, Դատարան այս



## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

բողոքը կքննի միայն ամսական վճարումների չկատարման մասով:

### **(բ) Հայաստանին վերաբերող բողոքը**

3. Հայաստանի կառավարությունը պնդել է, որ դիմումատուն չի սպառել իրավական պաշտպանության ներպետական միջոցներն տվյալ բողոքի մասով, քանի որ նա չի դիմել Հայաստանի կամ Մոլդովայի դատարաններին՝ կապված 1998թ. վճռի չկատարման հետ:

4. Այս կապակցությամբ դիմումատուն որևէ փաստարկ չի ներկայացրել:

5. Դատարանը գտնում է, որ կարիք չկա քննարկել իրավական պաշտպանության ներպետական միջոցները չսպառելու վերաբերյալ Հայաստանի կառավարության առարկությունները, քանի որ այս բողոքը, ամեն դեպքում, անընդունելի է՝ հետևյալ պատճառներով:

6. Սույն գործում 1988թ. հունվարի 15-ի՝ օրինական ուժի մեջ մտած դատական ակտով դիմումատուին շնորհվել են նախկին գործատուի՝ Երևանի մսի կոմբինատի կողմից ամսական վճարվող գումարներ, ինչը պայմանավորված է եղել աշխատանքի վայրում ստացված վնասվածքի հետ: Այնուամենայնիվ, 1997թ. հունիսի 2-ին, կապված սնանկության գործընթացի ավարտի և Երևանի մսի կոմբինատի իրավահաջորդ հանդիսացող «Ուրարտու» ԲԲԸ-ի վաճառքի հետ, ընկերությունն ազատվել է պարտքերը մարելու պարտավորությունից, ինչը ներառել է նաև դիմումատուի նկատմամբ ստանձնած պարտականությունները (տե՛ս վերը՝ § 17): Կարելի է, հետևաբար, եզրահանգել, որ 1997թ. հունիսի 2-ից Հայաստանի օրենսդրությամբ այլևս բացակայում էր՝ 1988թ. վճռով դիմումատուին ամսական վճարներ հատկացնելու պարտավորությունը:

7. Այս կապակցությամբ Դատարանը վերահաստատում է, որ միջազգային իրավունքի հանրաճանաչ նորմերի համաձայն՝ Կոնվենցիան յուրաքանչյուր Պայմանավորվող կողմի համար տարածվում է այն փաստերի վրա, որոնք տեղի են ունեցել Կողմի նկատմամբ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելուց հետո (տե՛ս, օրինակ, *Jovanović v. Croatia* (որոշում), թիվ. 59109/00, ՄԻԵԴ 2002-III):

## ՇՈՒՆՈՒՄ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

8. Դատարանը նշում է, որ Կոնվենցիան և թիվ 1 Արձանագրությունը Հայաստանի նկատմամբ ուժի մեջ են մտել 2002թ. ապրիլի 26-ից: Համապատասխանաբար, այն ժամանակ, երբ Կոնվենցիան Հայաստանի նկատմամբ մտել էր ուժի մեջ, «Ուրարտու» ԲԲԸ-ն և Հայաստանի իշխանությունները ներպետական օրենսդրությամբ պարտավորված չէին դիմումատուին հատկացնել 1988թ. վճռով նախատեսված փոխհատուցման վճարումները: Այսպիսով, Դատարանն իրավասու չէ քննել տվյալ բողոքը, քանի որ այն վերաբերում է դիմումատուի՝ քննարկվող վճարումները ստանալու իրավունքին, և, հետևաբար, վերաբերում է իրադարձություններին, որոնք տեղի էին ունեցել մինչև Հայաստանի նկատմամբ Կոնվենցիայի ուժի մեջ մտնելը:

9. Բացի դրանից, պարզելու համար, թե արդյոք 1988թ. վճռի չկատարման համար Հայաստանի իշխանությունները պատասխանատու են եղել Մոսկվայի համաձայնագրի 7-րդ հոդվածի և Կառավարության թիվ 576 որոշման հիմքով, անհրաժեշտ է հաստատել, թե արդյոք «Ուրարտու» ԲԲԸ-ին սնանկ հայտարարելը և այն այլ անձի վաճառելը հանգեցրել են դրա փաստացի լուծարմանը: Այնուամենայնիվ, Դատարանը չի կարող քննության առնել խնդրո առարկա սնանկության վերաբերյալ վարույթի հարցը, քանի որ այն դադարեցվել է 1997թ. և, հետևաբար, դուրս է Դատարանի *ratione temporis* իրավասությունից:

10. Հետևաբար, այս բողոքը *ratione temporis* չի համապատասխանում Կոնվենցիայի դրույթներին՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և, համաձայն 35-րդ հոդվածի 4-րդ կետի՝ պետք է մերժվի:

### **(գ) Մոլդովայի Հանրապետության դեմ ներկայացրած բողոքը**

11. Մոլդովայի կառավարությունը պնդել է, որ համաձայն *ratione loci* և *ratione personae* սկզբունքների՝ սույն բողոքը վերաբերելի չէ Մոլդովայի Հանրապետությանը: Այս առումով նրանք պնդել են, որ դիմումատուի հետ աշխատանքի ընթացքում կատարված պատահարը տեղի է ունեցել Հայաստանի տարածքում: Երևանի մսի կոմբինատի դեմ վճիռ է կայացրել Հայաստանի դատարանը

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

և, հետևաբար, ենթակա է Հայաստանի իշխանությունների կողմից կատարման Հայաստանի տարածքում:

12. Դիմումատուն պնդել է, որ Մոլդովայի կառավարությունը որևէ արդյունավետ միջոց չի ձեռնարկել, որպեսզի կատարի 1988թ. վճիռը՝ չնայած նա տեղյակ էր այն փաստին, որ 1992թ. հունվարից սկսած պարտապան «Ուրարտոս» ԲԲԸ-ն դադարել էր վճարումը:

13. Դատարանը նշում է, որ սույն գործը վերաբերում է Հայաստանում հիմնադրված իրավաբանական անձի դեմ Հայաստանի դատարանի կողմից կայացված վճիռը չկատարելուն (համեմատել՝, *Racu v. Moldova (որոշում)*, թիվ 13136/07, 2008 թվականի հուլիսի 1): Այն փաստը, որ դիմումատուն, լինելով 1988թ. վճիռի շահառու, միաժամանակ Մոլդովայի քաղաքացի է, բավարար չէ պնդելու, որ Մոլդովայի իշխանությունները որևէ կերպ պատասխանատու են վճիռի չկատարման համար: Այս առումով, հատկանշական է, որ դիմումատուն չի մանրամասնել, թե ինչպես և ինչ իրավական հիմքով են Մոլդովայի իշխանությունները պարտավորված եղել ձեռնարկելու անհրաժեշտ միջոցներ, որոնք, սակայն, ենթադրաբար չեն ձեռնարկել: Հիմք ընդունելով վերոշարադրյալը՝ Դատարանը գտնում է, որ Մոլդովայի իշխանությունները պատասխանատու չեն 1988թ. վճիռի չկատարման համար:

14. Հետևաբար գանգատի այս մասը *ratione personae* հիմքով անհամատեղելի է Կոնվենցիայի դրույթների հետ՝ 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով, և պետք է մերժվի՝ համաձայն Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 4-րդ կետի:

### 2. 2003թ. մարտի 27-ի վճիռի չկատարումը

15. Դատարանը նշում է, որ սույն բողոքը Կոնվենցիայի 35-րդ հոդվածի 3-րդ կետի իմաստով ակնհայտորեն անհիմն չէ: Դատարանը այնուհետև նշում է, որ այն անընդունելի չէ որևէ այլ հիմքով: Այն, հետևաբար, պետք է հայտարարվի ընդունելի:

## Բ. Գործի ըստ էության քննությունը

### 1. Կողմերի փաստարկները

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

16. Հայաստանի կառավարությունը պնդել է, որ 2003թ. վճռի ճանաչման և կատարման վերաբերյալ դիմումատուի պահանջը մերժելը չի խախտել դիմումատուի՝ Կոնվենցիայով նախատեսված իրավունքները: Մասնավորապես, այն պնդել է, որ 2003թ. վճռի առարկան 1988թ. վճռի առարկայի հետ եղել է նույնական, հետևաբար նման մերժումը եղել է նաև օրինական՝ Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետի և այլ ներպետական իրավական ակտերի դրույթների հիմքով: Այս առումով, Հայաստանի կառավարությունը պնդել է, որ Մինսկի կոնվենցիայի վերոնշյալ դրույթը *res judicata* սկզբունքի դրսևորումն է, որի պայմանները տարածվել են սույն գործի վրա, քանի որ, նախքան 2003թ. վճիռը, միևնույն կողմերի միջև, միևնույն առարկայի մասին և միևնույն հիմքերով առկա է եղել մեկ այլ՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ:

17. Դիմումատուն պնդել է, որ 1988թ. և 2003թ. վճիռների առարկանները եղել են տարբեր: Մասնավորապես, 1988թ. վճռով նրան տրամադրվել էր ամսական վճար միայն բժշկական օգնության և հավելյալ սննդի համար, մինչդեռ 2003թ. վճռով «Ուրարտու» ԲԲԸ-ից հօգուտ դիմումատուի ենթակա էր բռնագանձման 17,884 ԱՄՆ դոլար՝ դեղորայքի, պրոթեզավորման, ներտնային ծառայությունների, առողջարանային բուժման, անկողնային սպիտակեղենի, տրանսպորտային միջոցի, վերջինիս հիմնական վերանորոգման և վառելանյութի, ինչպես նաև մերսման ծառայությունների ծախսերի համար:

### 2. Դատարանի գնահատականը

#### (ա) Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետ

18. Դատարանը վերահաստատում է, որ [ներպետական] դատարանի կայացրած վճռի կատարումը 6-րդ հոդվածի իմաստով «դատաքննության» անբաժանելի մասն է (տե՛ս *Hornsby v. Greece*, 1997 թվականի մարտի 19, § 40, Վճիռների և որոշումների մասին զեկույցներ 1997-II). Բացի դրանից, երբ հարցը վերաբերում է քաղաքացիական իրավունքներին և պարտականություններին, 6-րդ հոդվածը կիրառելի է և՛ ներպետական, և՛ օտարերկրյա՝ ուժի մեջ մտած վճիռների

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

կատարման նկատմամբ (տե՛ս *McDonald v. France* (որոշում), թիվ 18648/04, 2008 թվականի ապրիլի 29):

19. Դատարանը այնուհետև վերահաստատում է, որ դատական ատյանների կողմից կայացրած վճիռներում պետք է պատշաճորեն նշվեն դրանց հիմքում դրված պատճառաբանությունները: 6-րդ հոդվածի 1-ին կետը դատարաններին պարտավորեցնում է իրենց վճիռները պատճառաբանել, բայց չի պարտադրում մանրամասն անդրադառնալ յուրաքանչյուր փաստարկի (տե՛ս *Hirvisaari v. Finland*, թիվ 49684/99, § 30, 2001 թվականի սեպտեմբերի 27): Պատճառաբանմանը վերաբերող պարտականության աստիճանը կարող է տարբեր լինել՝ պայմանավորված որոշման բնույթով և այն պետք է որոշվի գործի համգամանքների լույսի ներքո (տե՛ս *Ruiz Torija v. Spain* և *Hiro Balani v. Spain*, 1994 թվականի դեկտեմբերի 9, շարք «Ա», թիվ 303-Ա և 303-Բ, § 29 և համապատասխանաբար § 27; և *Fomin v. Moldova*, թիվ 36755/06, § 24, 2011 թվականի հոկտեմբերի 11):

20. Անդրադառնալով սույն գործի հանգամանքներին՝ Դատարանը նշում է, որ 2003թ. մարտի 27-ի վերջնական որոշման համաձայն, Չոկանա շրջանի առաջին ատյանի դատարանը բավարարել է «Ուրարտու» ԲԲԸ-ի դեմ դիմումատուի ներկայացրած պահանջը՝ շնորհելով ընդհանուր 17,884 ԱՄՆ դոլար: Համաձայն Մինսկի կոնվենցիայի դրույթների՝ 2003թ. վճիռը՝ համաձայն *էկզեկվատորային* պահանջի, ենթակա էր Հայաստանի իշխանությունների կողմից ճանաչման և կատարման: Դիմումատուն 2003թ. սեպտեմբերի 1-ին ՄԱՆ և ՀԱՆ միջոցով նման պահանջ էր ներկայացրել (տե՛ս վերը՝ § 34): 2004թ. մարտի 4-ին էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանը բավարարում է պահանջը: Սակայն, 2004թ. ապրիլի 23-ին Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը վերանայում է դիմումատուի պահանջը և մերժում է այն: Վերաքննիչ դատարանը հղում է կատարում 1988թ. վճիռն և մեջբերում է Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետը՝ այդպիսով նշելով, որ նախկինում առկա էր միևնույն կողմերի միջև, միևնույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վճիռ վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այն է՝ 1988թ. վճիռը (տե՛ս վերը՝ § 38):

21. Այս առումով, Դատարանը նշում է, որ չնայած այն սկզբունքը, որից ելնելով մերժվել է դիմումատուի պահանջը,

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

ինքնին անհիմն չէր, այնուամենայնիվ Դատարանը ցանկանում է անդրադառնալ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի կողմից դրսևորած մոտեցմանը: Մասնավորապես, Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի 2004թ. ապրիլի 23-ի որոշման մեջ ֆորմալ առումով մեջբերված է Կոնվենցիայի 55-րդ հոդվածը, մինչդեռ նշված չէ որևէ պատճառաբանություն, թե ինչից ելնելով են 1988թ. և 2003թ. վճիռների առարկաները համարվել նույնը: Դատարանը նշում է, որ 2003թ. վճռով դիմումատուին տրամադրվել է գումար, *inter alia*, ներտնային ծառայությունների, անկողնային սպիտակեղենի, տրանսպորտային միջոց գնելու, վերջինիս հիմնական վերանորոգման և վառելանյութի դիմաց: Այդ իսկ պատճառով Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը պարտավոր էր պատճառաբանել, թե ինչու են այդ ծախսերը դասվում դիմումատուին 1988թ. վճռով տրամադրված լրացուցիչ բժշկական օգնության և հավելյալ սննդակարգի կատեգորիայի շարքը: Այսպիսով, նման պարագայում դատարանի պատճառաբանությունը չի կարող պատշաճ համարվել:

22. Վճռաբեկ դատարանը նույնպես փորձ չի արել շտկելու իրավիճակը, քանի որ այն պարզապես անփոփոխ է թողել Վերաքննիչ դատարանի որոշումը՝ նշելով, որ դիմումատուի բողոքը, որով վերջինս պնդել է, որ երկու վճիռների առարկաները եղել են տարբեր, անհիմն է:

23. Ելնելով վերոշարադրյալից՝ Դատարանը եզրակացնում է, որ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի դրսևորած մոտեցումը դիմումատուի 2003թ. վճիռը ճանաչելու և կատարելու պահանջը մերժելու վերաբերյալ, մասնավորապես՝ Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետին ֆորմալ հղում անելը և իր որոշմամբ իր այն դիրքորոշումը չպատճառաբանելը, որ 1988թ. և 2003թ. վճիռները ունեն միևնույն առարկան, չի համապատասխանել արդար դատաքննության պահանջներին:

24. Համապատասխանաբար, խախտվել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը:

### **(բ) Թիվ 1 Արձանագրության 1-ին հոդված**

25. Դատարանը, հիմնվելով Կոնվենցիայի 6-րդ հոդվածի ներքո իր վերոնշյալ եզրահանգումների վրա, անհրաժեշտ չի համարում

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

նույն բողոքը առանձին քննել թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո:

### II. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ ԱՅԼ ԵՆԹԱԴՐՅԱԼ ԽԱԽՏՈՒՄՆԵՐ

26. Դիմումատուն բողոքել է նաև Կոնվենցիայի 6-րդ հոդվածի և թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո՝ այն հարցով, որ 1973թ. նոյեմբերի 20-ի վճիռը չի կատարվել և, որ Մոլդովայի իշխանությունները պատասխանատու էին 2003թ. վճռի չկատարման համար: Դիմումատուն այնուհետև բողոքել է Կոնվենցիայի 2-րդ հոդվածի ներքո, որ նա զրկված է եղել կյանքի իրավունքից՝ բնականոն կյանքի առումով: Նա բողոքել է նաև 14-րդ հոդվածի ներքո, որ նրա նկատմամբ ցուցաբերվել է խտրական վերաբերմունք, քանի որ նրա օգտին կայացրած վճռի չկատարման պատճառը եղել է իր՝ ծագումով ռուս լինելը:

27. Հաշվի առնելով իր տրամադրության տակ գտնվող բոլոր նյութերը և այնքանով, որքանով այդ բողոքները գտնվում են իր դատազորության ներքո՝ Դատարանը գտնվում է, որ դրանցով չի բացահայտվում Կոնվենցիայով կամ դրան կից Արձանագրություններով սահմանված իրավունքների և ազատությունների առերևույթ խախտման որևէ դեպք:

### III. ԿՈՆՎԵՆՏԻԱՅԻ 41-ՐԴ ՀՈԴՎԱԾԻ ԿԻՐԱՌՈՒՄԸ

28. Կոնվենցիայի 41-րդ հոդվածով նախատեսվում է՝

«Եթե Դատարանը գտնում է, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի կամ դրան կից Արձանագրությունների խախտում, իսկ համապատասխան Բարձր պայմանավորվող կողմի ներպետական իրավունքն ընձեռում է միայն մասնակի հատուցման հնարավորություն, ապա Դատարանը որոշում է, անհրաժեշտության դեպքում, տուժած կողմին արդարացի փոխհատուցում տրամադրել»:

#### Ա. Վնասը

## ՇՈՂՈՒՆՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

29. Դիմումատուն պահանջել է 431,590 եվրո՝ որպես նյութական վնասի փոխհատուցում և 1,000,000 եվրո՝ որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում:

30. Հայաստանի կառավարությունը պնդել է, որ դիմումատուի թե՛ նյութական, թե՛ ոչ նյութական վնասների փոխհատուցման վերաբերյալ պահանջներն անհիմն են, և դրանք պետք է մերժվեն: Ավելին, ինչ վերաբերում է ոչ նյութական վնասին, ապա դիմումատուն չի հիմնավորել, որ ենթադրյալ խախտման և պահանջվող վնասի միջև եղել է որևէ պատճառահետևանքային կապ:

31. Դատարանը դիտարկում է, որ ճանաչել է Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում այն մասով, որ Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը պատշաճ կերպով չի պատճառաբանել դիմումատուի՝ 2003թ. վճռի ճանաչման և կատարման պահանջը մերժելու վերաբերյալ իր որոշումը: Այնուհանդերձ, Դատարանը չի գնահատի այն հարցը, թե դիմումատուի վերաբերյալ իրականացված դատավարությունն ինչ արդյունք կունենար, եթե դատարանները պատճառաբանեին իրենց որոշումները: Դատարանը, հետևաբար, չի տրամադրում նյութական վնասի փոխհատուցում: Մյուս կողմից Դատարանը համարում է, որ դիմումատուն կրել է ոչ նյութական վնաս սույն վճռով ճանաչված Կոնվենցիայի խախտման առումով: Առաջնորդվելով արդարացիության սկզբունքով՝ Դատարանը դիմումատուին տրամադրում է 5,000 եվրո փոխհատուցում:

### **Բ. Ծախսերը և ծախքերը**

32. Դիմումատուն չի ներկայացրել որևէ պահանջ սույն գլխի ներքո:

### **Գ. Չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը**

33. Դատարանը պատշաճ է համարում, որ չկատարման դեպքում հաշվարկվող տոկոսադրույքը պետք է հիմնվի Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի վրա, որին պետք է գումարվի երեք տոկոսային կետ:



ՇՈՒՆՈՒՄ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

ԱՅՍ ՀԻՄՆԱՎՈՐՄԱՄԲ ԴԱՏԱՐԱՆԸ՝

1. Միաձայն *հայտարարում է*, 2003թ. վճռի չկատարման վերաբերյալ Հայաստանի կառավարության դեմ ներկայացրած բողոքն ընդունելի, և, ձայների մեծամասնությամբ, գանգառի մնացած մասն՝ անընդունելի.
2. Հինգը երկուսի ձայների հարաբերակցությամբ *վճռում է*, որ տեղի է ունեցել Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտում.
3. Միաձայն *վճռում է*, որ չկա անհրաժեշտություն առանձին քննելու թիվ 1 Արձանագրության 1-ին հոդվածի ներքո բողոքը՝ կապված 2003թ. վճռի չկատարման հետ.
4. Հինգը երկուսի ձայների հարաբերակցությամբ *վճռում է*, որ՝  
(ա) Հայաստանի Հանրապետությունը, վճիռը Կոնվենցիայի 44-րդ հոդվածի 2-րդ կետի համաձայն ուժի մեջ մտնելուց հետո երեք ամսվա ընթացքում դիմումատուին պետք է վճարի 5,000 եվրո (հինգ հազար եվրո)՝ գումարած նշված գումարին հաշվարկվող բոլոր տեսակի հարկերը որպես ոչ նյութական վնասի փոխհատուցում, որը պետք է փոխարկվի մոլդովական լեյով՝ վճարման օրվա դրությամբ գործող փոխարժեքով.  
(բ) վերը նշված եռամսյա ժամկետի ավարտից հետո մինչև վճարման օրը պետք է վճարվի վերը նշված գումարի պարզ տոկոս՝ պարտավորությունների չկատարման ժամանակահատվածում Եվրոպական կենտրոնական բանկի սահմանած փոխառության առավելագույն տոկոսադրույքի չափով՝ գումարած երեք տոկոսային կետ.
5. Հինգը երկուսի ձայների հարաբերակցությամբ *մերժում է* դիմումատուի՝ արդարացի փոխհատուցման պահանջի մնացած մասը:

Կատարված է անգլերենով և գրավոր կերպով ծանուցվել է 2012 թվականի հուլիսի 31-ին՝ համաձայն Դատարանի Կանոնակարգի 77-րդ կանոնի 2-րդ և 3-րդ կետերի:

ՇՈՒՆՈՒՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ

Santiago Quesada  
Քարտուղար

Josep Casadevall  
Նախագահ

Համաձայն Կոնվենցիայի 45-րդ հոդվածի 2-րդ կետի և  
Դատարանի Կանոնակարգի 74-րդ կանոնի 2-րդ կետի  
դատավորներ Գյուլումյանի, Ziemele-ի, López Guerra-ի և  
Tsotsoria-ի առանձին կարծիքները կցվում են սույն վճռին:

J.C.M.  
S.Q.

ՇՈՒՈՒՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈՒԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ - ԱՌԱՆՁԻՆ  
ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ԳՅՈՒԼՈՒՄՅԱՆԻ ԵՎ LÓPEZ GUERRA-Ի  
ՀԱՄԱՏԵՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

1. Մենք համաձայն չենք Պալատի՝ Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետի խախտման վերաբերյալ եզրահանգումների հետ: Երբ, *էկզեկվատորային* պահանջի ներքո, Քիշնևի Չոկանա շրջանի առաջին ատյանի դատարանի 2003թ. վճիռը ենթակա էր Հայաստանի իշխանությունների կողմից ճանաչման և կատարման, պահանջը քննության էին առել և լուծել էին երեք դատական ատյաններ: Այդ դատավարությունների ժամանակ Հայաստանի քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանը, վերացնելով էրեբունի և Նուբարաշեն համայնքների առաջին ատյանի դատարանի նախորդ եզրակացությունը, 2004թ. ապրիլի 24-ին որոշել էր մերժել դիմումատուի պահանջը: Բերված պատճառաբանումն այն էր, որ պահանջը վերաբերում էր հարցերին, որոնց վրա տարածվում էր *res judicata* սկզբունքը՝ նշելով (ինչպես նշվել է սույն վճռի 68-րդ կետում), որ «նախկինում առկա էր միևնույն կողմերի միջև, միևնույն առարկայի մասին և միևնույն հիմքերով վեճի վերաբերյալ դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, այն է՝ 1988թ. վճիռը»: Հայաստանի վճռաբեկ դատարանն անփոփոխ էր թողել Քաղաքացիական գործերով վերաքննիչ դատարանի որոշումը:

2. Նման հանգամանքներում մենք չենք գտնում, որ Հայաստանի իշխանությունները խախտել են Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետը՝ Քիշնևի դատարանի 2003թ. վճռի պատշաճ կատարման մասով: Ի պատասխան *էկզեկվատորային* պահանջի՝ երեք անգամ Հայաստանի դատարանները քննել և լուծել են դիմումատուի բողոքները՝ հիմնվելով գործում առկա փաստերի իրենց գնահատականի վրա և ներպետական ու միջազգային կիրառելի իրավունքի իրենց մեկնաբանության վրա: Գործում առկա փաստերը քննելիս՝ Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանները գտել են, որ Հայաստանի դատարանի 1988թ. վճռի և Մոլդովայի դատարանի 2003թ. վճռի քննության առարկան նույնն էր (այսինքն՝ լրացուցիչ բժշկական օգնության և աշխատանքից ստացված վնասվածքներից ծագող այլ ծախսերի փոխհատուցում)՝ հիմնվելով Մինսկի կոնվենցիայի 55-րդ հոդվածի «գ» կետի վրա, որը *res judicata* գործերում ազգային իշխանություններին

**ՇՈՒՈՒՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ - ԱՌԱՆՁԻՆ  
ԿԱՐԾԻՔՆԵՐ**

ազատում է օտարերկրյա դատարանների որոշումների ճանաչման և կատարման պարտավորությունից: Հայաստանի դատարանները իրենց վճիռներում սահմանել են հիմքերը և կիրառել նորմերն այնպես, որ դրանք չեն կարող համարվել կամայական կամ անհիմն: Հետագայում դա ամրապնդվեց այն փաստով, որ ընկերությունը, որը 1988թ. վճռով փոխհատուցման համար պատասխանատու էր, սնանկ է ճանաչվել և վաճառվել է երրորդ կողմին, որը դատական կարգով ճանաչվել էր ընկերության պարտքերի համար պատասխանատվություն չկրող:

3. Դիմումատուն համաձայն չէ Հայաստանի Վերաքննիչ և Վճռաբեկ դատարանների կայացրած որոշումների հետ: Բայց նրա անհամաձայնությունը՝ հիմնված փաստերի տարբեր մեկնաբանությունների վրա, բավարար հիմք չէ Հայաստանի դատարանների կողմից քննված գործի փաստական և իրավական գնահատականի վերանայման համար, քանի որ նման գնահատականը (ինչպես սույն գործում) պատճառաբանված է և հիմնված է գործող օրենսդրության վրա: Հաշվի առնելով այն փաստը, որ Հայաստանի դատարանները իրավակիրառական տեսանկյունից ապահովել են բոլոր դատավարական երաշխիքները (մի փաստ, որը դիմումատուն չի հերքում), Կոնվենցիայի 6-րդ հոդվածի 1-ին կետով չի նախատեսվում մեր Դատարանի կողմից քննել ներպետական դատարանների կողմից եզրակացություններ կատարելիս ենթադրաբար թույլ տված փաստական կամ իրավական սխալները:

ՇՈՒՈՒՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ - ԱՌԱՆՁԻՆ  
ԿԱՐԾԻՔՆԵՐ

ԴԱՏԱՎՈՐՆԵՐ ZIEMELE-ի ԵՎ TSOTSORIA-ի  
ՀԱՄԱՏԵՂ ՀԱՏՈՒԿ ԿԱՐԾԻՔԸ

1. Մենք կողմ ենք քվեարկել 6-րդ հողվածի խախտման մասով, և դեմ՝ գանգատի մնացած մասի անընդունելիության և դիմումատուի արդարացի փոխհատուցման պահանջի մերժման մասով: Մենք կարող ենք հետևել մեծամասնության պատճառաբանությանը այս գործով 6-րդ հողվածի խախտման ճանաչման հարցում, բայց համարում ենք, որ դա ամբողջությամբ չի անդրադարձնում գործում առաջադրված խնդրին:

2. Առաջին հերթին, 1988 թվականից առկա էր ի օգուտ դիմումատուի Երևանի առաջին ատյանի դատարանի՝ օրինական ուժի մեջ մտած վճիռ, որով ճանաչվել էր մի շարք խոշոր չափով վճարներ ստանալու դիմումատուի իրավունքը, ինչպես նաև Մսի Կոմբինատի կողմից կատարվող ամսական վճարումներ, որը սահմանվել էր դիմումատուի՝ հաշմանդամության պատճառ հանդիսացած նրա աշխատանքի կապակցությամբ ստացված վնասվածքների համար: Կոմբինատը դիմումատուին վճարումներ է կատարել մինչև 1992 թվականը: 1997 թվականին կոմբինատը սնանկ էր ճանաչվել և պարտապան ընկերությունը ազատվել էր որևէ պարտք վճարելուց՝ «Ձեռնարկությունների և անհատ ձեռներեցների սնանկացման մասին» ՀՀ օրենքի 34-րդ հոդվածի համաձայն: Պետք է նշել, որ Կառավարության 1992 թվականի որոշմամբ նախատեսվել է, որ ընկերության լուծարման դեպքում դրա իրավահաջորդը պետք է վճարի պարտքերը, իսկ եթե չկա իրավահաջորդ պետք է վճարեն Պետության սոցիալական մարմինները: Այս Որոշումը ուժի մեջ էր մինչև 2004թ. օգոստոս ամիսը: Ավելին, Հայաստանը և Մոլդովան Մոսկվայի համաձայնագրի կողմեր էին, որի 7-րդ հոդվածը սահմանում է. «Աշխատողին հասցված վնասի համար պատասխանատու ընկերության լուծարվելու և իրավահաջորդի բացակայության դեպքում Պայմանավորվող կողմը, որի տարածքում ընկերությունը լուծարվել է, պետք է երաշխավորի նման աշխատակիցների համար վնասի փոխհատուցում»:

3. 2001թ. դիմումատուն Մոլդովայի արդարադատության նախարարության միջոցով և հղում անելով Մոսկվայի համաձայնագրին, Հայաստանի իշխանություններից պահանջել է

**ՇՈՒՈՒՈՎԱՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ - ԱՌԱՆՁԻՆ  
ԿԱՐԾԻՔՆԵՐ**

կատարել 1988թ. վճիռը: Փոխադարձ գրագրության արդյունքում 2002 թվականին Հայաստանի արդարադատության նախարարությունը տեղեկացրել է Մոլդովայի արդարադատության նախարարությանը Մսի կոմբինատի սնանկ ճանաչվելու և իրավահաջորդի բացակայության մասին: Պետք է նշել, որ այս պատասխանը ուղարկվել է Մոլդովա այն ժամանակ, երբ դեռ ուժի մեջ էր Կառավարության 1992 թվականի որոշումը: Դիմումատուի և Հայաստանի տարբեր իրավասու մարմինների միջև մի քանի տարվա գրագրությունից հետո՝ 2006 թվականին, Հայաստանի աշխատանքի և սոցիալական հարցերի նախարարությունը հայտարարել է, որ դիմումատուն պետական բյուջեից միջոցներ ստանալու համար կարող է դիմել սոցիալական մարմիններին՝ ինչպես սահմանված էր Կառավարության 1992 թվականի հրամանով: Քանի որ դիմումատուն չի օգտվել այս իրավունքից, ապա նա պետք է այժմ բողոք ներկայացնի ներպետական դատարաններ:

4. Պալատը գտնում է, որ քանզի սնանկության հետ կապված վարույթը դադարեցվել է 1997 թվականին, ապա 1998թ. վճիռը չկատարելու վերաբերյալ դիմումատուի բողոքը *ratione temporis* սկզբունքի համաձայն դուրս է Դատարանի իրավասության սահմաններից: Մենք համաձայն չենք այս գնահատականի հետ: Վճիռը չկատարումը շարունակվում է մինչև այն պահը, երբ վճիռը բեկանվում կամ այլ կարգով փոփոխվում է համապատասխան դատարանների կողմից (տե՛ս *Sabin Popescu v. Romania*, թիվ 48102/99, § 54, 2004 թվականի մարտի 2): Պարզվում է, որ այս մոտեցումը կիրառելի չէ այստեղ, և ոչ էլ ընկերության սնանկության վերաբերյալ որոշումը կարող է նման բեկանման փաստ համարվել, քանի որ Հայաստանը թե՛ ներպետական օրենսդրության, և թե՛ Մոսկվայի համաձայնագրի դրույթների ներքո պարտավոր էր իր տարածքում աշխատողներին երաշխավորել փոխհատուցման տրամադրումը կրած վնասների համար: Պալատը սույն գործում կասկածելի տարանջատում է մտցրել լուծարման ու սնանկացման միջև: Նույնիսկ ենթադրելով, որ նման տարանջատում կարող է լինել, ապա Մոսկվայի համաձայնագրի առարկան և նպատակը Հայաստանի իշխանությունների կողմից պետք է պատշաճորեն գնահատվի: 2001 թվականին Հայաստանի արդարադատության նախարարությունը պետք է արդեն տեղյակ լիներ, թե

**ՇՈՒՈՒՈՎՆ ԸՆԴԴԵՄ ՀԱՅԱՍՏԱՆԻ ԵՎ ՄՈԼԴՈՎԱՅԻ ՎՃԻՌ - ԱՌԱՆՁԻՆ  
ԿԱՐԾԻՔՆԵՐ**

դիմումատուի բողոքը որ մարմնին պետք է ուղղվեր, կամ եթե նրանք համարել էին, որ դիմումատուն պետք է հայց ներկայացներ Հայաստանի դատարաններ, ապա նրանք պետք է համապատասխանաբար տեղեկացնեին դիմումատուին դրա մասին: Հայաստանի իշխանությունները միայն 2006 թվականին էին հայտարարել, որ դիմումատուի համար արդեն շատ ուշ է եղել սոցիալական մարմիններից փոխհատուցում ստանալու համար: Այս պատասխանն ինքնին չունի մեծ նշանակություն, քանի որ դիմումատուն Հայաստանի իշխանությունների հետ կապի մեջ է եղել սկսած 2001 թվականից:

5. Պալատը ճիշտ է դիտարկում 57-րդ կետում, որ մենք չենք կարող որոշել Կոմբինատի լուծարման կամ սնանկության վերաբերյալ վարույթների պատշաճ կարգը: Միևնույն ժամանակ Դատարանը միշտ գնահատել է Պետության գործողությունները կապված վճիռների չկատարման հետ, ինչպես նաև պատշաճ և հստակ օրենսդրություն ունենալու պարտավորությունը, որը կապահովի վճռների կատարումը: Մենք համարում ենք, որ 1988թ. վճռի կատարումը շատ խնդրահարույց էր, իսկ դժվարությունները վերագրելի են Հայաստանին: Մեկ այլ մեծ խնդիր ի հայտ է գալիս կապված Մոսկվայի համաձայնագրի ներքո Հայաստանի ստանձնած միջազգային պարտավորությունների կատարման հետ: Թվում է, թե դիմումատուի խնդիրները դեռ առկա են, և ընթացակարգերը, որոնց արդյունքում ընդունվել է 2003թ. վճիռը, հարցին լուծում չեն տվել, եթե դրանք իրականում վերաբերում են 1988թ. վճռին, որի կապակցությամբ Պալատը 6-րդ հոդվածով խախտում է ճանաչել: Այս հարցը մնում է անհասկանալի: Վերը նշված պատճառաբանությամբ մենք համարում ենք, որ տեղի է ունեցել 6-րդ հոդվածի խախտում նաև 1988թ. վճռի չկատարման մասով: